

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԼԱՆՂՇԱՖՏԱՅԻՆ
ԴԻԶԱՅՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ
Ավետիսյան Գ. Ռ., Հարությունյան Հ. Հ.**

Աշխատանքում ներկայացված է լանդշաֆտային դիզայնի կարևորությունը արդի քաղաքաշինության գործընթացում Գյումրի քաղաքի օրինակով: Լանդշաֆտային դիզայնի ուսումնասիրությունների հիման վրա կատարվել են եզրահանգումներ, առաջարկություններ: Համեմատություններ են անցկացվել Գյումրիի և այլ երկրների քաղաքների լանդշաֆտային դիզայնի միջև, պարզաբանվել են առկա խնդիրները, նրանց առաջացման պատճառները:

Բանալի բառեր. լանդշաֆտային դիզայն, ինժեներական լանդշաֆտագիտություն, ճարտարապետություն, կանաչապատ տարածք, սթրիտարտ, հատակագիծ, կլասիցիզմ, ռացիոնալ, մոդեռնիզմ:

Լանդշաֆտային թաղանթում և լանդշաֆտագիտության մեջ այսօր առանձնացվում են նոր ոլորտներ, որոնք էլ ձևավորում են ուսումնասիրման նոր ուղղություններ: Այդ ուղղություններից է համարվում լանդշաֆտային դիզայնը, կամ, այսպես ասած, ինժեներական լանդշաֆտագիտությունը, որը հնարավորություն է տալիս կառուցումները կատարել լանդշաֆտային առումով անթերի և լանդշաֆտը դարձնել առավելագույն օպտիմալ:

Ներկայիս դրությամբ դեռևս լանդշաֆտային դիզայնը իր հիմունքներով և կարևորությամբ չի գտել իր ուրույն տեղը Հայաստանի ճարտարապետության, քաղաքաշինության ոլորտում: Որպես արդի ուղղություն՝ այն շատ կարևոր դերակատարում պիտի ունենա մեր երկրում, քանի որ բնակչության շրջանում թերի իրազեկվածությունը, քաղաքային տարածքների շինարարական կառույցներով զբաղվող կազմակերպությունների բացթողումները բերում են հենց քաղաքային

տարածքների լանդշաֆտային դիզայնի խնդիրների առաջացմանն ու վատթարացմանը:

Անցյալի քաղաքաշինական ըմբռնումը չի կարող ընդգրկել քաղաքի արդյունաբերական շրջանի երևույթն ամբողջությամբ, որովհետև քաղաքի նոր թաղամասերը կառուցվում են՝ կցելով հնին, նոր կենտրոնների կառուցապատումը կատարվում է նոր պահանջների և հին տեսության մոտեցմամբ [1]:

Հայաստանում արդի քաղաքաշինության ամենանուրբ հարցերից մեկն է՝ պահպանել ու բարելավել հին քաղաքի կորիզը և օրգանապես միացնել զարգացող նոր շրջանները, ուստի ելակետ պիտի ընդունել տեղագրական, սոցիալական, բնապատկերային, երթևեկության տարրերի ուսումնասիրություններից հետևած նախադրյալները և նորակերտ թաղամասը պետք է ներհյուսել արդեն գոյություն ունեցող քաղաքի ենթակառուցին [2]:

Հայաստանի քաղաքների տարածքային լանդշաֆտային դիզայնի և նրա խնդիրների բացահայտման համար կատարել ենք Գյումրի քաղաքի լանդշաֆտային դիզայնի ուսումնասիրություններ, գտել ենք խախտման բազմաթիվ խնդիրներ, որոնք փորձել ենք ներկայացնել և առաջարկել լուծումներ:

Պետք է հաշվի առնել մի հանգամանք, որ Գյումրի քաղաքի լանդշաֆտային ճարտարապետական դիզայնն ունի պատմական նշանակություն ունեցող մոտեցում: Այստեղ առաջանում է մի միտք, որ քաղաքն ամբողջությամբ անհնար է ենթարկել միանման օրենքի կամ լանդշաֆտային դիզայնի սկզբունքին, որովհետև նրա ծավալատարածական կերպարը մարդու ստեղծած մշակույթի մասնակի արտահայտությունը չէ միայն, այլ իր ամբողջությամբ առարկայնորեն սահմանված մշակումն է: Այս առումով՝ քաղաքի կազմը հնարավոր է փոխել այն դեպքում միայն, երբ հիմնովին հեղաշրջվի քաղաքասոցիալական կազմը, որն անհնարին է, իսկ սրա լուծման համար հարկավոր է մասնակիից հանգել ընդհանուրին, այսինքն՝ հնի համադրումը նորի հետ՝ հաշվի առնելով լանդշաֆտային դիզայնի և՛ սուբյեկտիվ, և՛ օբյեկտիվ տարրերը [1]:

Քաղաքի ձևաբանական կազմը արտահայտվում է երկրաչափական երկու մոտեցումներով՝ կանոնավոր և անկանոն: Գյումրի քաղաքի գլխավոր հատակագիծն ունի կանոնավոր մոտեցում, բայց իրականում քաղաքի զարգացումը տեղի է ունեցել և ունենում է անկանոն ձևով:

Գյումրի քաղաքի լանդշաֆտային դիզայնի կարևոր խնդիրներից է ջրահեռացման համակարգը, որն իրականացվում է փողոցների ստորգետնյա հատվածով և գտնվում է վատթար վճակում, կանոնակարգված ջրահեռացման նախագիծ չի գործում: Փողոցաշինության բարեկարգման ժամանակ բախվում են մի շարք խնդիրների, և պատմական նշանակության շատ շինություններ հայտնվում են փլուզման եզրին:

Ըստ Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի՝ փողոցներն ունեն փոխուղղահայաց կանոնավորված տեսք՝ կանոնավորված ուղղանկյուն թաղամասերով: Բայց ներկայիս դրությամբ նախատեսված կանոնավորված զարգացում չկա, հիմնական կանոնավորված զարգացումը որոշ չափով նկատվում է միայն քաղաքի կենտրոնական հատվածներում, իսկ հատկապես ծայրամասային հատվածներում զարգացումը անկանոն է ընթացել և շարունակում է ընթանալ: Մեր դիտարկումների արդյունքում պարզվեց, որ թույլ են տրված այնպիսի լանդշաֆտային դիզայնի խախտումներ, ինչպիսիք են շենքերի գլխավոր, հիմնական պատերի քանդումը և վերափոխումը, կամ բնակելի շենքի բնակարանի մուտքի փակումը և դրա տեղափոխումը:

Գյումրիի 18-19-րդ դարի ճարտարապետական ժառանգության մի մասը գտնվում է ոչ բարվոք վիճակում, անհետևողականության պատճառով փլուզվել, ոչնչացել է, մի մասն էլ գտնվում է վթարային վիճակում կամ վերածվել է այլ շինությունների, որոնք շահագործվում են ոչ նպատակային, արդյունքում՝ որոշ շինություններ կորցրել են իրենց գեղագիտական, մշակութային արժեքը:

Ընդհանուր առմամբ Գյումրի քաղաքի ներկայիս վատթար վիճակի պատճառներից մեկը 1988թ. աղետալի երկրաշարժն էր, քանի որ երկրաշարժից հետո հանպատրաստից սկսվեց չկանոնակարգված շինարարություն:

Քաղաքի կառուցման վրա նշանակալի չափով ազդել է նաև ռուսական քաղաքաշինության առաջավոր մշակույթը, որի շնորհիվ նախկինում տարերայնորեն կառուցապատված Գյումրին վերափոխվել է ուղիղ փողոցների [3], [8], [9], [10]:

Քաղաքաշինության զարգացման արդի փուլում լանդշաֆտային դիզայնի համար շատ կարևոր ենք համարում կանաչապատ տարածքների հարցը: Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծում հստակ տրված են կանաչապատ տարածքները, որտեղ 1988թ. երկրաշարժի հետևանքով առանց որևէ թույլտվության կառուցվել են բնակելի

շինություններ՝ քաղաքին գրկելով մեծ կանաչապատ տարածքներից: Չնայած սկզբնական շրջանում նշվել էր, որ դա ժամանակավոր բնույթ է կրելու, սակայն ժամանակի ընթացքում այդ կանաչապատ տարածքները վերածվեցին մշտական բնակելի վայրերի, անգամ ապօրինի զբաղեցրած տարածքները համայնքի ղեկավարության կողմից թույլատրվեցին սեփականաշնորհել՝ խախտելով քաղաքային տարածքի լանդշաֆտային դիզայնը:

Այսօր քաղաքի համայնքապետարանի պատկան մարմինները սկսել են գլխավոր հատակագծով նախատեսված կանաչապատ տարածքների վերականգման աշխատանքները: Այն շատ բարդ աշխատանք է իրենից ներկայացնում, քանի որ այս գործըթացը բերում է անհատների հետ բախման, որի հետևանքով դեռևս այս խնդրի լուծումը չի իրականացվում:

Բացի վերը նշված կանաչապատ տարածքների ապօրինի զբաղեցրած խնդրից՝ հարկ է նշել նաև քաղաքի մյուս կանաչապատ տարածքների ոչ ռացիոնալ օգտագործման խնդիրը, որ ևս շատ կարևոր է ժամանակակից քաղաքային տարածքների լանդշաֆտային դիզայնի ոլորտում: Պարզվում է, որ քաղաքում կանաչ տարածքների տարրերը օգտագործվում են ոչ ռացիոնալ ու ոչ տեղին, որոշ խաղաղապարակներ կառուցվում են ոչ նպատակահարմար վայրում և ոչ հարմարավետ տարբերակով: Հիմնական ուշադրությունը կանաչ տարածքների նկատմամբ նկատվում է միայն քաղաքի կենտրոնական այգում և քաղաքի պատմական միջուկի տարածքում: Այս կանաչ տարածքներում, բացի վերը նշված խնդիրներից, առկա է նաև ջրաբքիացման խնդիրը: Ոռոգման բացակայության պատճառով չկա բազմապիսի բուսականություն, միայն անկանոն ձևով տնկված ոչ դեկորատիվ ծառեր են:

Քաղաքի կենտրոնական հրապարակում ընդհանրապես բացակայում է կանաչ տարածքը. այն շրջապատված է մի շարք կարևոր պատմական շինություններով, որոնց ընդհանուր արտաքին լանդշաֆտային ճարտարապետական տեսքը նման է, բայց վերջին ժամանակաշրջանում կառուցվել են մի շարք շինություններ, որոնք իրենցից ոչ մի պատմական արժեք չեն ներկայացնում, տեղի ճարտարապետական տեսքին համահունչ չեն կառուցվել և տարածքը գրկել են գեղագիտական գրավչությունից:

Ուսումնասիրությունների արդյունքում նկատվել են քաղաքային տարածքային լանդշաֆտային դիզայնի այսպիսի խախտումների բազմաթիվ օրինակներ, ու այսպիսի խնդրների լուծման համար դեռևս

չկան համակարգված աշխատանքներ, որը հիմնականում կապված է անտարբերության, ոչ ճիշտ գործունեության, ժամանակին կանխարգելիչ աշխատանքներ չիրականացնելու հետևանքով:

Գյումրի քաղաքում լանդշաֆտային դիզայնի կարևոր հիմնախնդրներից է համարվում նաև աղբի վերամշակման և հավաքման գործընթացը, դեռևս քաղաքի որոշ տեղամասերում աղբարկղերը տեղադրված են հետիոտանցման համար նախատեսված մայթերին՝ առանց որևէ կահավորման, որը քաղաքի ընդհանուր լանդշաֆտային դիզայնի տեսքի խախտում է: Նաև այս խնդրի հետ է առնչվում փողոցային առևտրի աճը, որի պատճառով քաղաքի գեղագիտական դիզայնի խախտում է տեղի ունենում:

Վերջին ժամանակաշրջանում Գյումրի քաղաքում, ինչպես նաև ՀՀ այլ քաղաքներում, նկատվում է սթրիտարտ՝ ժամանակակից վառ արտահայտված ուրբանիստական բնույթի կերպարվեստի կիրառումը, որը իրենից ներկայացնում է բնակելի շենքերի և այլ շինությունների ներկումը տարբեր գրաֆիկական էսքիզներով:

Գյումրի քաղաքում սթրիտարտ նկարչություն իրականացնող անձինք նշում են, որ չեն համագործակցում համայնքի ղեկավարության կամ այլ կառույցների հետ որևէ աշխատանք կատարելուց առաջ: Պարզվում է նաև, որ նրանք հազվադեպ են հաշվի առնում տեղի բնապատկերին համահունչ գրաֆիկական էսքիզներ անելը: Այսօր քաղաքում առկա են այնպիսի սթրիտարտ աշխատանքներ, որոնք կատարվել են առանց հաշվի առնելու տվյալ շինության պատմական արժեք լինելը՝ դրանով իսկ վնասելով մշակութային արժեք ունեցող կառույցները:

Մեր հետազոտություններում փորձել ենք նաև համեմատություններ անցկացնել Գյումրի քաղաքի և այլ երկրների այն քաղաքների լանդշաֆտային դիզայնի միջև, որտեղ քաղաքի սկզբնական զարգացումը տեղի է ունեցել Գյումրի քաղաքի նման, և նաև վերջին ժամանակաշրջանում կիրառվել և ներդրվել է լանդշաֆտային դիզայնը:

Շատ նմանություններ կան ռուսական ճարտարապետական լանդշաֆտային դիզայնի հետ [3]: Այդ նկատառումով՝ Գյումրի քաղաքը համեմատեցինք Ռուսաստանի Մոսկվա և Սանկտ Պետերբուրգ քաղաքների լանդշաֆտային դիզայնի հետ, և, ինչպես Գյումրի քաղաքի զարգացման դեպքում է եղել անկանոն քաղաքաշինությունը մինչ ռուսական կլասիցիզմի ժամանակաշրջանը, այնպես էլ Մոսկվայի և Սանկտ Պետերբուրգի դեպքում է եղել [11], [12]:

Մակայն ներկայումս Մոսկվայի և Մանկտ Պետերբուրգի քաղաքային լանդշաֆտային դիզայնը արագ զարգացում է ապրում, քաղաքի լանդշաֆտային դիզայնի տարրերը օգտագործվում են ռացիոնալ, ավելի նպատակային [13]: Ի տարբերություն Գյումրի քաղաքի՝ այստեղ շեշտը դրվել է կյանքի որակի և բնակելի տարածքի գեղագիտության առավելությանը, առանձնահատուկ ուշադրություն է դարձվել բակերի դասավորությանը, նորաձևությանը, և այս ամենին եկել են լանդշաֆտային դիզայնի տարրերի ավելի ռացիոնալ օգտագործման շնորհիվ:

Գյումրի քաղաքում ժամանակակից ճարտարապետության ոճով կառուցված շինությունները չեն համադրվում քաղաքի պատմական շինությունների ոճին, և տեղ-տեղ ստեղծվում է անհամահունչ լանդշաֆտային դիզայն, որը չի նպաստում քաղաքի զարգացմանը:

Կատարված հետազոտությունների հիման վրա կարելի է եզրակացնել.

1. Հայաստանում դեռևս չկան ժամանակակից լանդշաֆտային դիզայնի մոտեցման համակարգված միջոցառումներ: Խախտումների ուղղման դեպքում էլ անհատների կողմից բախվում են խոչընդոտների:
2. Գյումրի քաղաքում լանդշաֆտային դիզայնի ժամանակակից մոտեցումների արդյունավետ միջոցների կիրառում, նոր մեթոդների ներդրում դեռևս չի նկատվում: Քաղաքի զարգացման աճն ունի ապակենտրոն կարգավիճակ:
3. Գյումրի քաղաքում անհատական շահերի և հանրային պահանջների միջև տեղի ունեցող անողորք պայքարում սոցիալական պահանջները զիջում են ֆինանսական կազմակերպություններին, քաղաքային դրվածքին:
4. Գյումրի քաղաքում լանդշաֆտային դիզայնի տարրերը օգտագործվում են ոչ ռացիոնալ ձևով, չեն գործում ընդհանուր համակարգված, նախագծված ծրագրեր: Քաղաքի գլխավոր հատակագիծը չի համապատասխանում ներկայիս քաղաքի կառուցվածքին:

ПРОБЛЕМЫ ЛАНДШАФТНОГО ДИЗАЙНА ГОРОДСКИХ ТЕРРИТОРИЙ НА ПРИМЕРЕ ГОРОДА ГЮМРИ

Аветисян Г. Р., Арутюнян О. А.

В данной работе показано значение ландшафтного дизайна в современном городостроительстве на примере города Гюмри. По

исследованиям ландшафтного дизайна сделаны выводы и предложения. Проведены сравнения в ландшафтном дизайне Гюмри и других городов, выявлены актуальные проблемы и причины их возникновения.

Ключевые слова: ландшафтный дизайн, инженерный ландшафт, архитектура, озелененные места, стрит-арт, архитектурный план, классицизм, рациональность, модернизм.

LANDSCAPE DESIGN PROBLEMS OF THE CITY AREAS BY THE EXAMPLE OF GYUMRI

Avetisyan G. R., Harutyunyan H. H.

The paper highlights the importance of landscape design in modern city-building by the example of Gyumri. Conclusions and suggestions are made based on the research of landscape design. Comparisons are done in the landscape design of Gyumri and other cities, the current problems and the reasons of their occurrence are found out.

Keywords: landscape design, engineering landscape, architecture, verdurous places, street art, floor plan, classicism, rational, modernism.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Զարյան Ա. Արևմտյան Եվրոպայի արդի ճարտարապետություն: Երևան: Հայկ. ՍՍՀ ԳԱ հր.: 1979: 207 էջ:
2. Զարյան Ա. Իտալական արդի ճարտարապետություն: Երևան: Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն: 1975: 162 էջ:
3. Մաթևոսյան Ս. Գյումրիի ժողովրդական ճարտարապետություն: Երևան: «Սովետական գրող» հրատարակչություն: 1985: 144 էջ:
4. Տիգրանյան Է. Հայ ճարտարապետների գործունեությունը Անդրկովկասում: Երևան: «Ոսկան Երևանցի» հր.: 2003: 264 էջ:
5. <https://www.gyumricity.am/> (20.02.2021)
6. https://www.gyumricity.am/Community_Passport/hatakagic.jpg (15.03.2021)
7. <https://urbanista.am/gyumri-reconstruction> (22.03.2021)
8. <https://visitgyumri.com/am/gyumri-history/> (15.03.2021)
9. <https://visitgyumri.com/am/alexandrapol-era-architecture/> (10.04.2021)
10. <https://ostarmenia.com/ru/armenianarchit-6ru/> (20.05.2021)
11. <https://annawwts.com/architecture/spb/> (27.05.2021)

12. http://www.facade-project.ru/spravochniki/razdel_statej/fasadnyj_dekor_v_stilyah_arhitektury/moskovskij_klassicism/(12.06.2021)
13. <https://peterburg.center/story/sovremennye-zdaniya-sankt-peterburga-arhitektura-peterburga-v-xxi-veke.html> (12.06.2021)

Տեղեկություններ հեղինակների մասին

Ավետիսյան Գ. Ռ. – աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Շիրակի պետական համալսարան
Էլ. փոստ gayane.avetisyan.5@mail.ru

Հարությունյան Հ. Հ. – ուսանող
Շիրակի պետական համալսարան
Էլ. փոստ hovsep.harutyunyan.1998@gmail.com

Տրվել է խմբագրություն՝ 21.08.2021
Գրախոսվել է՝ 17.11.2021